

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ, ԵՐԿՐՈՒ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐԸ

1912 հոկտեմբերի 12ին որոշուած էր  
տօնել հայկական տղաղրութեան 400  
և գիրերու գիւտի 1500 ամեակները  
էջմիածնի մէջուր իր մասնակցութիւ-  
նը պիտի տանէր արեւելեան և արեւ-  
մըսեան ամբողջ Հայութիւնը :

Սակայն Տաճկահայերու քաղաքա-  
կան անձպատ պայմաններուն պատճա-  
ռով տօնը յետաձդուեցաւ ներկայ  
տարուան հոկտեմբերի 12ին : Այս առթիւ մէկ  
տարի ժամանակ արուցաւ հայ ժողո-  
վուրդին, ամէն տեղ կատարելու հան-

դէսներց մէծարանքի արժանի ամէն  
տէսակ ձեռնարկներ՝ հայ գիրքի և հայ  
տառելու առները ու աւելի նորիքակա-  
նացնելու և յաներժացնելու համար :

Մէկ տարուան ժամանակամիջոցին՝  
Թուանայերը իրենց մասնակցութիւնը  
բերին այդ համազգային առներուն՝  
հանդէսներ և հրատարակային հաւա-  
քումներ սարքելով ։ Եւ մամուլին մէջ  
պրական կամ զպրոցական փոնտերու  
առաջարկներ ընելով :

Տաճկահայերու քաղաքական կա-  
ցութիւնը դժբախտաբար երթալով ալ  
աւելի ծանրացաւ, որով արեւմտահա-  
յութիւնը իր կողմէն ոչ մէկ պաշտօնա-  
կան ձեռնարկ ըրաւ : Զետյելով որ Պոլ-  
սէն սկսեալ մինչեւ զաւառները առին  
մասնակցելու համար ժողովներ տեղի  
ունեցան, որովումներ արուեցան, բայց  
զործնական քայլ մը չառնուեցաւ : Վեր-  
ջերս միայն կարինի երիտասարդական  
Միութեան նախաձեռնութեամբ հան-  
դէսներ տեղի ունեցան Ա. Կարտովետ և  
Աշտիշատ վանքերուն մէջ :

Յոբելեանական տարին սակայն  
շուտով կը լրանայ և առաջիկայ հոկտ.  
12ին պիտի կատարուի համազգային  
հանդէսը էջմիածնի մէջ :

Անցեալ ամբան հոս ու զանազան  
ընկերութիւններու, միութիւններու  
կուսակցութիւններու և զպրոցներու  
ներկայացուցիչներէն քաղկացած կարգ  
մը ժողովներ տեղի ունեցան, որոշելու  
համար թէ վանը իր կողմէն ի՞նչ մաս-  
նակցութիւն ոլիտի ունենայ համազգա-  
յին այս օօներուն : Այս առթիւ յանձ-  
նախումբ մը կաղմաւեցաւ, որ զիմում-  
ներ ըրաւ էջմիածնին և Պոլիս, տօնը  
ըստ կարելոյն արժանավայել և հաւա-  
քարար կատարելու համար : Այսպէսով  
յանձնախումբի զործունէութիւնը վեր-  
ջացաւ և ժողովներու որոշումները,  
որոնք ամբողջապին տեղական հանգա-  
մանը ունէին, ապարդիւն մնացին :

Բայց արդեօք Վանը, որ այն քան  
լիորէն օգտուած է հաւ զիրերու գիւտի  
և ապազրութեան տուած բարիքներէն,  
պիտի մեայ անտարբեր և սառնասիրտ  
դիտո՞ղ համազգային խոնդավառու-  
թեան այս ոգեկոչ տօներուն հանդէս :

Ժամանակը սուզ է : Վասպուրա-  
կանի հայութիւնը պէտք է փութայ իր  
յարդանքը և մասնակցութիւնը բերե-  
լու այս հաղուազիւտ յարելեանական  
տօներուն : Մանաւանդ աղգային պաշ-  
տօնական մարմիններուն կ'իյնայ ընդ  
առաջ երթալ ժողովրդական ցանկու-  
թեան և պատրաստել արժանավայել  
հանդէսներ :